«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022 ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Ուսումնական դասագրքերի դերն և դրանց ներկայացվող պահանջները տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ - դասվար

ՀԵՂԻՆԱԿ - Ռուզան Սարգսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - Սևանի N 4 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------

ԳԼՈՒԽ 1. Ուսումնական դասագրքերի դերն և դրանց ներկայացվող պահանջները տարրական դասարաններում----------

1.1 1-ից 4-րդ դասարանների դասագրքերի դերն ու ուսումնադաստիարակչական գործառույթները----------

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------

Ներածություն

Աճող սերունդի կրթության, դաստիարակության առաջին քայլերը իրականացվում են տարրական դասարաններում:

Դասվարի և մանկավարժների խնդիրը ոչ միայն դպրոցականների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ապահովումն է, այլ նաև նրանց անձնային որակների, զգացմունքների, սովորույթների, արժեհամակարգի ձևավորումն է: Տարրական դասարաններում ուսուցման և դաստիարակության գործընթացների միասնությամբ է, որ պատրաստում են հասարակության համար ապագա պիտանի քաղաքացիներ:

Թեմայի արդիականությունը նաև նրանում է, որ կարևորագույն խնդիրներից մեկը դարձել է այն, թե այսօրվա ուսումնական դասագրքերը ինչ դերակատարություն ունեն սովորողի դաստիարակության և կրթական գործընթացում: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում տարրական դասարանների սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում դասագրքերի դերի և նշանակության բարձրացմանը: Կարծում ենք, որ հիմնական շեշտը պետք է դրվի տարրական դպրոցի 1-ից 4-րդ դասարանների առարկաների դասագրքերին, քանի որ դրանց միջոցով է ձևավորվում սովորողների արժեհամակարգը:

Հետազոտության նպատակը՝ Կրտսեր դպրոցականի արաժեհամակարգի ձևավորման գործում դասագրքերի դերի և նշանակության բացահայտումն է:

Հետազոտության խնդիրները՝

- Ներկայացնել 1-ից 4-րդ դասարանների դասագրքերի համապատասխանությունը դասագրքին ներկայացվող ընդհանուր պահանջներին:

- Բացահայտել տարրական դասարանի դասագրքի դաստիրակչական նշանակություն:

Հետազոտության առարկան՝ 1-ից 4-րդ դասարանի դասագրքերի դաստիարակչական նշանակությունն Է: **Հետազոտության մեթոդները՝**

- Զրույզի,
- Դիտման,
- Հարցաթերթիկային հարցման մեթոդ:

1.ՈՒսումնական դասագրքերի դերն և դրանց ներկայացվող պահանջները տարրական դասարաններում

Դասագրքերը գրվում են մասնագետների կողմից, որոնք պարտավոր են շեշտադրումն անել ակադեմիական գիտելիքների ճշգրտվածության ու պատշածության հարցերի վրա: Չնայած այն բանին, որ ՀՀ-ում կիրառվող բոլոր դասագրքերն անցել են գնահատման ու երաշխավորման դասընթացներ, այնուամենայնիվ, դրանց որակի ու կիրառման արդյունավետության առումով առկա են բազմաթիվ բացթողումներ ու թերություններ:

Այս իսկ առումով անչափ կարևորվում է դասագրքերի որակի գնահատման ու դրանց մշտական բարելավման խնդիրը, որոնցով մշտապես զբաղվում են գիտնականները, մանկավարժ-հետազոտողները, հրատարակչությունները և այլ շրջանները: Դիտարկվելով որպես փոխկապակցված բաղադրիչների բազմաթիվ գործառույթներ իրականացնող համակարգ, դասագրքերն իրենց հիմքում պետք է ունենան պաշտոնապես հաստատված կրթության բովանդակությունը: Դրանց կառուցվածքային ու մեթոդաբանական տարրերը պետք է ապահովեն գրքի գործառույթների ճիշտ իրականացումը: Սրանից բխում է այն, որ տվյալ երկրի կրթության բովանդակությունն ու դասագրքերի

բաղադրիչ տարրերը պետք է գտնվեն փոխկապակցվածության ու փոխազդեցության մեջ: Դասագրքերը ստեղծելիս պետք է որոշակիացնել դասագրքերի հիմքը կազմող մեթոդաբանական ու արժեքային մոտեցումները՝ պատկերացում ունենալով, թե ինչպես են դրանք «աշխատելու»: Դասագրքերին ներկայացվող ամենակարևոր պահանջներն են՝ մատչելիությունը, շարադրման լեզվի ու ոճի հստակությունը, սովորողների ճանաչողական ընդունակությունների զարգացումը, նրանց անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելու հնարավորությունների առկայությունը, գիտելիքի յուրացման գործում տրամաբանական ու գործնական աշխատանքի զուգակցումը, նյութի մատուցման արդյունավետ տեխնիկայի օգտագործումը, ժամանակի առողջապահական պահանջների համապատասխանությունը, նյութի ինքնուրույն յուրացման հնարավորությունը, գեղարվեստական բարձր ճաշակը և այլն:

Այս չափանիշներով դասագրքեր ստեղծելիս պետք է միշտ նկատի ունենալ, որ մենք տարրական դասարաններում գործ ունենք սովորողների տարիքային, հոգեբանական ու այլ առանձնայիատկություններ հետ: Այստեղից այն հետևությունը, որ տարրական դպրոցի դասագրքերին ներկայացվող պահանջների ընտրությունը պայմանավորում է նրանց ուսուցման դաստիարակության ու արժեհամակարգի արդյունավետ կազմակերպումը:

Տարրական դասարանների դասագրքերն ընդհանրական չափանիշներով ու բովանդակային առումով պետք է համապատասխանեն ՀՀ Սահմանադրությանը, Երեխայի իրավունքների համընդհանուր հռչակագրին և այլն:

ՀՀ-ում կիրառվող դասագրքերն ու ուսուցչի ձեռնարկները կազմելիս հիմք են ընդունվել մի շարք երկրների փորձը՝ նպատակ ունենալով պահպանել դասագրքերին ներկայացվող ընդհանրական չափանիշները:

Տարբեր ժամանակներում տարբեր են եղել տարրական դպրոցի դասագրքերին ներկայացվող պահանջները: Ըստ մանկան ու մանկական հոգեբանության նշանավոր մասնագետ Դ. Բ. Էլկոնինի՝ վերջին հարյուրամյակի սկզբում տարրական ուսուցման դասագրքերին ներկայացվող գլխավոր պահանջն եղել է ապահովել. «…կարդալու, գրելու, պարզագույն թվաբանական գործողությունների և խնդիրների լուծման հմտությունները…»:

Բնության երևույթների մասին ունեցած և հասարակական կյանքից ստացված տեղեկությունները կազմում էին տարրական դպրոցում ուսուցման հիմնական բովանդակությունը: Այս շրջանում տարրական դպրոցի դասագրքերին ներկայացվող պահանջները երեխաներին չէին նախապատրաստում հետագա ուսուցմանը և սահմանափակում էին գիտության հիմունքները խորությամբ ու լրիվ ուսումնասիրելու հնարավորությունները: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո արմատապես փոխվեցին տարրական ուսուցման դասագրքերին ներկայացվող պահանջները և՛ ուսուցման բովանդակության, և՛ մեթոդների կազմակերպման առումով:

Ընդհանուր պարտադիր՝ սկզբում ոչ լրիվ միջնակարգ, ապա միջնակարգ կրթության անցումը, բնականաբար, փոխել է տարրական ուսուցման գործառույթն ու դասագրքերին ներկայացվող պահանջները: Տարրական դպրոցի դասագրքերը պետք է հնարավորություններ ստեղծեն տարրական դպրոցի սովորողների համար գիտական գիտելիքների համակարգի յուրացման գործում և նախապատրաստեն անցումը միջնակարգ կրթության:

Տարրական դպրոցում ուսուցման ու դաստիարակության կատարելագործման ճանապարհին փոխվել են դասագրքերին ներկայացվող պահանջներն ու չափորոշիչները: Ըստ Էլկոնի ոչ մի կասկած լինել չի կարող, որ ուսուցման կրտսեր աստիճանում

ուսումնական ծրագրերի ու մեթոդների, հետևաբար դասագրքերին ներկայացվող պահանջների, փոփոխությունները լուրջ քայլեր են ուսուցման բովանդակությունը գիտելիքների ժամանակակից մակարդակին մոտեցնելու ճանապարհին:

Գիտելիքների ու կարողությունների կատարելագործմանը և տարրական դասագրքերի ծրագրերը միջին դպրոցի ուսուցման բովանդակությանը մոտեցնելուն զուգընթաց շարունակ ու անհրաժեշտաբար փոխվում են նաև տարրական դասագրքերին ներկայացվող պահանջները: Այդ խնդիրներն ուղղակիորեն և՝ տարրական ուսուցման հարցերի հետ շաղկապված, անդրադառնում են ժամանակակից հայ մանկավարժներ: Տարրական ուսուցման դասագրքերին ներկայացվող պահանջների գլխավոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանց միջոցով է կազմակերպվում ու իրականացվում, ըստ Հեգելի, դպրոց ընդունվելով՝ իր կյանքի նոր ժամանակի սկիզբ դնող երեխայի ուսուցման ու դաստիարակության գործընթացը: Արդիական է նաև Հեգելի այն միտքը, որ լինելով հասարակության անդամ, երեխան՝ մինչև որոշակի տարիքի հասնելը, լրիվ այդպիսին լինել չի կարող: Տարրական դպրոցի դասագրքեր ստեղծողներն ու կազմողները պարտավոր են հաշվի առնել նաև այս պահանջը: Պետության խնդիրն է ապահովել դասագրքերի ստեղծման չափորոշիչային պահանջների կատարումը վերահսկելու արդյունավետ մեխանիզմներ, դասագրքաստեղծ խմբերին տրամադրել դասագրքերի համար մշակված չափելի պահանջներ, ուսուցիչներին հնարավորություն տալ դասագրքերի ու այլ ձեռնարկների ընտրության հարցում:

Մեր երկրում նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծմանը ներկայացվող պահանջների համատեքստում լուրջ ու կարևոր նշանակություն է տրվում տարրական

դասարաններում դասագրքերի դերին և դրանց ներկայացվող պահանջներին:

Պետությունը պարտավոր է՝

- որակյալ ուսումնական նյութերի միջոցով սովորողների ուսումնառությունը դարձնել ավելի գրավիչ ու արդյունավետ:
- խթանել գործող դասագրքերի բովանդակության, դիդակտիկական համակարգի, լեզվի, կառուցվածքի ու արժեհամակարգի բարելավումը:
- հատուկ ուշադրություն դարձնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների համար նախատեսված դասագրքերի որակին ու պահանջներին:

Տարրական դասարանների դասագրքերն ընդհանրական չափանիշներով ու բովանդակային առումով պետք է համապատասխանեն ՀՀ Սահմանադրությանը, Երեխայի իրավունքների համընդհանուր հռչակագրին, Կրթության մասին ՀՀ օրենքին, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին հռչակագրին:

Դասագրքի բովանդակությանը վերաբերող չափանիշները դասագրքին ներկայացվող պահանջների մեջ առաջնային են, որովհետև սրանից են բխում մնացած չափանիշները, որոնցով էլ պայմանավորված է դասագրքի կիրառման արդյունավետությունը Դասագրքեր ստեղծելիս պետք է միշտ նկատի ունենալ, որ մենք տարրական դասարաններում գործ ունենք սովորողների տարիքային, հոգեբանական ու այլ առանձնայիատկություությունների հետ:: Դասագրքի բովանդակությունը պետք է լինի գիտականորեն հիմնավորված, խորն ու ընդգրկուն, արդիական, հաշվի առնելով սովորողների տարիքային զարգացման առանձնահատկությունները և նրանց նախնական գիտելիքներն ու հմտությունները:

Տարրական ուսուցման դասագրքերի դերը շատ կարևոր է սովորողների արժեհամակարգի ձևավորման ու զարգացման գործում: Այս գործընթացը պետք է նպաստի ժողովրդավարական արժեքների, բնապահպանական դիրքորոշման ու համամարդկային առումով ընդունված վարքի կանոնների ամրապնդմանը: Դասագրքերի խնդիրը պետք է լինի շրջապատի նկատմամբ հարգանքի ու պատասխանատվության ձևավորումը և սովորողների անձնային որակների զարգացումը: Դասագրքերում բովանդակվող նյութերը պետք է հանգեցնեն սովորողների առողջ ապրելակերպի ու բնության հանդեպ խնայող ու պահպանող վերաբերմունքի ստեղծմանը:

Բովանդակության ընկալումն ու յուրացման գործընթացը պայմանավորված են դասագրքի կառուցվածքով: Այն պետք է լինի հաճելի ու մատչելի, կիրառելի, հարմար ու տրամաբանական: Դասագրքում եղած վերնագրերը, խորհրդանիշները, վահանակները, ցանկն ու սխեմաները պետք է լինեն պարզ հասկանալի ու նպատակաուղղված: Դասագրքի կառուցվածքից է կախված դասագրքի միամյա ու բազմակի օգտագործման նյութերի՝ լրացվող հարցաշարերի, փակցվող նյութերի կիրառման հնարավորությունը: Դասագրքում ընդգրկված նկարազարդումների ու այլ նյութերի հեշտ ըմբռնման հիմքում պետք է ընկած լինեն տարրական ուսուցման սովորողների տարիքային առանձնահատկությունները: Դասագրքի կառուցվածքի առումով կարևորվում է նաև կարդալու համար ազատ տարածության ճիշտ օգտագործումը, ավելորդ նյութերով չծանրաբեռնվածությունը, լուսանկարների, նկարների ու գծագրերի մեկնաբանությունների առկայությունն ու տեքստին համապատասխան լինելը:

Դասագրքերը պետք է աչքի ընկնեն լեզվամտածողության լավագույն ձևավորմամբ ու մտքերն արտահայտելու կարողության զարգացմամբ: Տարրական դասարաններում, որպես կանոն, դասագրքի լեզուն պետք է համապատասխանի սովորողների տարիքին, կարդալու ու գրելու

մակարդակին, : Դասագիրքը լիարժեք է, եթե այնտեղ կան աշակերտների հետաքրքրություններին համապատասխանող տեքստեր, նոր բառապաշարը ներառված է աստիճանաբար ու ժամանակին, ապահովված է միասնական ոճը, լուրջ ուշադրություն է դարձված գրական լեզվի ձևաբանությանն ու քերականությանը,նախադասություններում բառերի առավելագույն քանակը կազմում է վեցից տասներկու բառ և այլն: Դասագրքերին ներկայացվող չափորոշիչային պահանջներն ու գործիքակազմը բաղկացած են հետևյալ բաժիններից.

- Բովանդակությանը վերաբերող չափանիշներ ու գործիքակազմ:
- Ուսուցմանը և ուսումնառությանը վերաբերող չափանիշներ ու գործիքակազմ:
- Հմտություններին վերաբերող չափանիշներ ու գործիքակազմ:
- Կառուցվածքին, ձևավորմանը վերաբերող չափանիշներ ու գործիքակազմ:
- Արժեհամակարգին վերաբերող չափանիշներ ու գործիքակազմ:

Տարրական ուսուցման դասագրքերին ներկայացվող չափանիշներն ու պահանջները մշակվում ու սահմանվում են կրթական ծրագրերին ու ուսումնական ոլորտներին համապատասխան: Դրանց միջոցով ապահովվում են տարրական ուսուցման սովորողների մտավոր, հոգևոր ու ֆիզիկական կարողությունների զարգացումը, լեզվամտածողության, գրագիտության, բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, տրամաբանության, աշխարհայացքի, պատկերացումների հիմքերի ստեղծումը, աշխատանքային նախնական հմտությունների, բարեկիրթ վարքի ու կայուն արժեհամակարգի ձևավորումը, էկոլոգիական ու ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի արմատավորումը: Դասագրքերի կարևորագույն խնդիրը պետք է լինի սովորողներին միջին

դպրոցում ուսումը շարունակելու համար հարկավոր կրթական մակարդակի ստեղծումը: https://www.e-draft.am/projects/518/about[12]

1.1 1-ից 4-րդ դասարանների դասագրքերի դերն ու ուսումնադաստիարակչական գործառույթները

Տարրական ուսուցման **«Մայրենի»** առարկայի գծով կիրառվող դասագրքում եղած նյութերի յուրացման միջոցով սովորողները պետք է կարողանան հասկանալ մայրենի լեզվին տիրապետելու անհրաժեշտությունն ու առաջնությունը, գիտակցել ազգային ինքնության հաստատման գործում մայրենի լեզվի դերը: Դասագրքին ներկայացվող պահանջների շարքում է տարրական ուսուցման սովորողներին նախնական պատկերացումներ ու տարրական գիտելիքներ տալ ինչպես հայերենի ուղղագրական ու քերականական կանոնների, այնպես էլ մանկական գեղարվեստական գրականության նմուշների ու բանահյուսական նյութերի մշակումների մասին: Դասագիրքը պետք է կարողանա արժևորել հայերենի դերն ու նշանակությունը: «Մայրենի» առարկայի յուրացմամբ սովորողները պետք է ընդունակ լինեն մայրենի լեզվով բանավոր ու գրավոր խոսքի միջոցով արտահայտել սեփական մտքերը, հաղորդակցվել շրջապատող աշխարհի ու մարդկանց հետ, հայերենով ստեղծված գրականության միջոցով ծանոթանալ բնության, հասարակության ու մարդու մասին եղած գիտելիքներին: Անչափ կարևոր է, որ նրանք դրսևորեն իրենց, զարգացնեն իրենց ունակություններն ու հմտությունները:

Որոշակի պահանջներ են ներկայացվում տարրական ուսուցման «Մաթեմատիկայի» դասագրքին: Այն տարրական ուսուցման սովորողներին պետք է հասցնի սեփական մտքերը ճշգրիտ ձևակերպելու, ուրիշի մտքերը հասկանալու անհրաժեշտության ու կարևորության, ինքնուրույն աշխատելու ու ստեղծագործելու գիտակցմանը: Մաթեմատիկայի դասագրքի համար կարևոր պահանջ է ներառել նախնական տարրական գիտելիքներ, բնական https://www.e-draft.am/projects/518/about[12]

թվերի ու դրանց համեմատականի վերաբերյալ պատկերացումներ, թվաբանական չորս գործողությունների ու դրանց կատարման կանոններ: Դասագրքի խնդիրն է սովորողներին գիտելիքներ ու պատկերացումներ տալ ամբողջի ու նրա մասերի, երկրաչափական պարզագույն պատկերների ու մարմինների, պարզ չափումների, երկարության, մակերեսի, ծավալի, ժամանակի, արագության, զանգվածի և դրանց չափման միավորների ու պարզագույն գործիքների մասին: Դասագրքում եղած նյութերի յուրացումից հետո սովորողը պետք է կարողանա պարզ մաթեմատիկական հասկացություններով աշխատելու, խնդիրներ ու վարժություններ լուծելու միջոցով զարգացնել իր մտավոր ընդունակությունները և ձևավորել տարբեր իրավիճակներում տրամաբանական դատողություններ կատարելու ու կողմնորոշվելու կարողություններ: https://lib.armedu.am

Յուրահատուկ պահանջներ են դրվում տարրական ուսուցման «Տեխնոլոգիա» դասագրքի ստեղծման հիմքում: Այստեղ ընդգծվում են սովորողների աշխատանքային նախնական հմտությունների, աշխատանքի ու աշխատող մարդկանց նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորման, աշխատանքային նյութերի, գործիքների, ռեսուրսների, անձնական ու հանրային ունեցվածքի հանդեպ խնայողական վերաբերմունքի դաստիարակման, կենցաղում աշխատելու համար տարրական գիտելիքների ու կարողությունների ձեռք բերման խնդիրները: Կարևորվում են միջավայրը գեղեցիկ ու հարմարավետ դարձնող օգտակար իրերի ստեղծման, գեղագիտական ընկալումների ու ճաշակի զարգացման, տարբեր մասնագիտությունների հետ ծանոթացման հարցերը: Դասագիրքը պետք է նախնական տարրական գիտելիքներ ու պատկերացումներ տա աշխատանքի ու աշխատատեղի ճիշտ կազմակերպման, նյութը ձեռքով մշակելու, նմուշներ պատրաստելու, օգտագործվող գործիքների ու հարմարանքների շահագործման եղանակների, բնական ու արհեստական որոշ նյութերի ու տեսակների, դրանց հատկությունների, կառուցվածքների https://lib.armedu.am

ու նշանակության հայերեն անվանումների վերաբերյալ: Դասագիրքը սովորողներին պետք է գիտելիքներ հաղորդի աշխատանքային գերծիքների օգտագործման ու պահպանման ձևերի ու եղանակների, սենյակային բույսեր աճեցնելու ու խնամելու, աշխատանքի անվտանգության կանոններն ու սանիտարահիգիենիկ պահանջների մասին:

«Երաժշտություն» առարկայի դասագրքի հիմնական դերն ու նշանակությունը տարրական դասարաններում՝

• Դաստիարակել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը:

• Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ:

• Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները:

• Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաև համաշխարհային երաժշտությունը:

• Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր:

Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել,
htths://b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf (escs.am)

աշխատել և արարել: Ըստ ռուս երաժշտագետ Բ. Ասաֆևի՝ «Երաժշտությունը իրականության կերպարահնչյունային արտացոլումն է», նրանում հնչում է կենդանի խոսք՝ հուզված կամ հանգիստ զրույց, դիմում, կոչ, հարց ու պատասխան: Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ: Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն: Ահա թե ինչպես է արտահայտվել երաժշտության ազդեցության մասին մեծ Կոմիտասը. «Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է: Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան»: Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ - անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասագրքի հիմնական խնդիրն է երեխայի սոցիալականացումը,ճանաչողության զարգացումը, շրջակա աշխարհի մասին գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույնությունը, որ երեխան ինքը կարողանա հետազոտել, ինչ-որ երևույթ տեսնելիս դրա շուրջ մտածի և փորձի եզրակացություններ անել, այսինքն՝ մտածելով ուսումնասիրի աշխարհը: Զարգանալու են երեխայի ստեղծագործական, անձնական, հաղորդակցական կրթական գործելակերպերը: «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար: «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված ուսումնական դասընթացը կոչված է օգնելու երեխային՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև

որպես հասարակության և բնության մասնիկ: Այն հուսալի հիմք է միջին և ավագ դպրոցների «Բնագիտություն», «Հասարակագիտություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Պատմություն» «Ֆիզիկա», «Կենսաբանություն», առարկաների, ինչպես նաև «Առողջ և անվտանգ կենսակերպ» ինտեգրվող բովանդակային ուղղության համար: Առարկայի բովանդակությունը կառուցվում է «ես» գաղափարի շուրջ՝ հետագայում ընդլայնելով և բացահայտելով անձի և նրանից դուրս գտնվող շրջանակների բազմաշերտ փոխազդեցությունները: «Ով եմ ես», «Ես և մյուսները», «Ես և բնությունը» և «Ես և տիեզերքը» ինտեգրված միավորները կրտսեր դպրոցականներին թույլ են տալիս պատկերացնել իրենց շուրջն եղած աշխարհի ամբողջական և միևնույն ժամանակ բազմաշերտ էությունը՝ փոխադարձ կապվածություններով և փոխկախվածություններով՝ ինքնաճանաչումից մինչև աշխարհաճանաչողություն:

«Ֆիզիկական դաստիարակություն» տարրական դասարանների դասագրքերի դերն է՝

- Գիտելիք տալ ֆիզիկական վարժություններով պարապելու կարևորության և ներդաշնակ զարգացման գործում դրանց ազդեցության վերաբերյալ:

- Գիտելիքներ հաղորդել տարբեր ֆիզիկական վարժությունների ժամանակ շնչառության ճիշտ զուգակցման վերաբերյալ:

- Տեղեկություններ հաղորդել ժամանակակից օլիմպիական խաղերի վերաբերյալ:

- Ֆիզիկական դաստիարակությունը կարևոր նշանակություն ունի սովորողների անձի ձևավորման, նրաց ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովման, մտավոր առաջընթացի, բարոյահոգեբանական որակների դաստիարակման և արժեքային համակարգի ձևավորման գործում:

1-ից 4-րդ դասարանների **«Կերպարվեստ»** առարկայի դասագրքերի հիմնական դերն է.

Ձևավորել՝

- գեղագիտական ճաշակ ,տրամաբանական, ստեղծագործական և քննական մտածողության պարզ հմտություններ,սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքներին անդրադառնալու և արձագանքելու կարողություններ:
- գիտելիքներ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի, ազգային արժեքների մասին:
- այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք:

Օգնել սովորողներին՝

- ճանաչել և պատկերել որոշ երկրաչափական պատկերներ, ունենալ պարզ տարածական պատկերացում:
- բերել պարզ հիմնավորումներ, կատարել ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ:
- դրսևորել տրամաբանական և ստեղծագործական մտածողության պարզ հմտություններ և կարողանալ անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին:
- հասկանալ իր առջև դրված խնդիրները, մշակել և կատարել քայլեր դրանք լուծելու համար:
- ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնել նրանց դիտողականությունը՝ ձևավորելով

Ստեղծագործական և տրամաբանական մտածողություն:

- ճանաչել և հարգել ՀՀ պետական խորհրդանիշները և իմանա պետական տոների հիմնական բովանդակությունը:
- արդյունավետ համագործակցել և հաղորդակցվել տարբեր ձևաչափերով, լսելով և հասկանալով այլոց կարծիքը, արտահայտելով սեփական տեսակետը:

«Ճախմատ» առարկան դասավանդվում է 2-4-րդ դասարաններում և ունի մի շարք առանձնահատկություններ: Դրանցով էլ պայմանավորում են « Ճախմատ» առարկայի դասագրքին ներկայացվող պահանջները: Ճախմատի դասագրքի գլխավոր խնդիրն է զարգացնել սովորողների կամային հատկանիշները, նրանց մեջ ամրապնդել մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու հմտությունների ուժեղացումը, գեղեցկացնել ճաշակը, ամրապնդել ուշադրությունն ու հիշողությունը, բացահայտել շախմատային օժտվածությամբ սովորողներին, ճիշտ գնահատելու, հարկ եղած դեպքում արժանապատիվ պարտվելու ձգտումները, զարկ տալ բարդ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու ընդունակությունները, մշակել ու ձևավորել գործնական ուղղվածությունը և ամրապնդել արժեհամակարգն ու մարդկային որակները: Ճախմատի դասագիրքը պետք է նպաստի սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը, կատարելագործի սովորողների երևակայությունն ու վերլուծական կարողությունները, սովորողների մեջ մշակի ու ձևավորի նպատակին հասնելու համար հետևողական ու շարունակական աշխատանքի անհրաժեշտության գիտակցության, խթանի մյուս առարկաների ուսումնասիրությունը, ընդլայնի ու խորացնի սովորողների հոգևոր աշխարհը: https://kznakhimnadram.blogsport.com

Եզրակացություն

Թեմայի արդիականությունը պայմանավորված է աճող սերնդի կրթությանն ու դաստիարակությանը ներկայացվող պահանջներով, նաև նրանում է, որ կարևորագույն խնդիրներից մեկը դարձել է այն, թե այսօրվա ուսումնական դասագրքերը ինչ դերակատարություն ունեն սովորողի դաստիարակության և կրթական գործընթացում: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում տարրական դասարանների սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում դասագրքերի դերի և նշանակության բարձրացմանը:

Կարծում եմ, որ հիմական շեշտը պետք է դրվի տարրական դասարանների առարկաների դասագրքերին, քանի որ դրանց միջոցով է ձևավորվում սովորողների արժեհամակարգը:

Դասագրքեր ստեղծելիս պետք է միշտ նկատի ունենալ, որ մենք տարրական դասարաններում գործ ունենք սովորողների տարիքային, հոգեբանական ու այլ առանձնայհատկություությունների հետ: Այստեղից այն հետևությունը, որ տարրական դպրոցի դասագրքերին ներկայացվող պահանջների ընտրությունը պայամանավորում է նրանց ուսուցման դաստիարակության ու արժեհամակարգի արդյունավետ կազմակերպումը:

Դասագրքերը տարրական դասարաններում ուսուցման կազմակերպման և կրթական միջավայրի ապահովման գլխավոր միջոց են: Դրանց միջոցով բացահայտվում է կրթության բովանդակությունը և պետական հանրակրթական չափորոշիչի ու առարկայական ծրագրերի համապատասխանությունը: Դասագրքերը պետք է համապատասխանեն դիդակտիկ սկզբունքներին ու ուսուցման նպատակներին: Հիմնականում դրանց միջոցով են իրականացվում տարրական ուսուցման սովորողների աշխարհայացքի ու բարոյական նորմերի ձևավորումը: Տարրական ուսուցման տարբեր ոլորտների ուսումնասիրության

առանձնահատկություններից ելնելով՝ յուրաքանչյուր առարկայի դասագրքին ներկայացվում են յուրահատուկ պահանջներ:Թեման ուսումնասիրելով հասկանում ենք որ, դասագրքերին ներկայացվող ամենակարևոր պահանջներն են՝ մատչելիությունը, շարադրման լեզվի ու ոճի հստակությունը, սովորողների ճանաչողական ընդունակությունների զարգացումը, նրանց անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելու հնարավորությունների առկայությունը, գիտելիքի յուրացման գործում տրամաբանական ու գործնական աշխատանքի զուգակցումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ» հրատ., 2015թ., 315 էջ
2. Ամիրբեկյան. Գ. , Վարդանյան Ա. Տ.: Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար: Երևան, «Նոյյան Տապան», 2005թ., 407 էջ
3. Էլկոնին Դ. Բ.: Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, «Լույս» հրատ., 1975թ., 68 էջ
4. Ղույումչյան Գ. Ե., Դեռահասի գիտական համոզմունքների ձևավորմանը ուսուցման գործընթացում. Երևան, Լույս 1986թ., 469 էջ
5. Թորգոմյան Լ. «Մանկավարժական արժեբանության հիմունքներ» ուսումնական ձեռնարկ 2011թ., Ա.ն.-Ջոն հրատարակություն:
6. Հակոբյան Ս., Գասպարյան Գ., Խաչատրյան Հ.: «Դասագրքի, ուսուցիչի ձեռնարկի և այլ ուսումնական նյութերի որակական բնութագրիչների ժողովածու»: Երևան, Զանգակ, 2021թ.,
7. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագիր (1-9-րդ դասարան): Եր., Անտարես, 2011թ., 81 էջ
8. Թունյան Ջ. Ե., Լ. Մ. Երիցյան: Կրտսեր դպրոցականի հոգեբանություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան, 2013թ.,
9. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9-րդ դասարան): Եր., Անտարես, 2011թ., 40 էջ
10. Տեր-Գրիգորյան Ա. «Հայոց լեզվի մեթոդիկա» «Լույս» հրատարակչություն, Երևան 1980թ.,
11. Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան 1981թ.,
12. https://www.e-draft.am/projects/518/about
13. https://kznakhimnadram.blogsport.com
14. https://lib.armedu.am